

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

---

- ✓ 2015թ. հուլիսի 2-3-ը ՀՀ ԱՎԾ միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Հ. Եղիազարյանը մասնակցել է ք. Դյուրեսում (Ալբանիա) կայացած «Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգիրք» թեմայով աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2015 թ. հուլիսի 3-ին ՀՀ ՎՊԽ անդամ Յու. Պողոսյանը մասնակցել է ք. Ժնևում (Շվեյցարիա) կայացած «Շրջակա միջավայրի տեղեկատվական համակարգի» շրջանակում երկրների հաշվետվողականության գործիքների մշակմանը նվիրված խորհրդակցությանը,
- ✓ 2015 թ. հուլիսի 6-10-ը ՀՀ ՎՊԽ անդամ Գ. Գևորգյանը մասնակցել է ք. Ժնևում (Շվեյցարիա) կայացած «Մանկական հաշմանդամության չափումը» թեմայով տարածաշրջանային սեմինարին,
- ✓ 2015թ. օգոստոսի 4-6-ը ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը և ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել են ք. Բիշքեկում (Ղրղզստան) կայացած «Աշխատուժի և մարդահամարի շրջանակում աշխատանքի շուկայի և աշխատանքային միգրացիայի ցուցանիշների չափման հետ կապված խնդիրները» խորագրով խորհրդակցությանը:

## ՏԵՂԱՅԻՆ ՍԵՄԻՆԱՐՆԵՐ

---

- ✓ 2015թ. հուլիսի 9-10-ը ՀՀ ՎՊԽ անդամ Յու. Պողոսյանը մասնակցել է ք. Աղվերանում կայացած «Մաքուր էներգիա և ջուր» ծրագրի շրջանակում Հայաստանի գետերում էկոլոգիական հոսքի գնահատման բարելավված մեթոդի հաշվետվության նախագծի ներկայացմանը,
- ✓ 2015թ. հուլիսի 10-ին ՀՀ ՎՊԽ անդամ Վ. Դավթյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Արտակարգ իրավիճակների արձագանքման պատրաստվածության շրջանակը և միջգերատեսչական նվազագույն պատրաստվածության գործողությունների վերանայում» խորագրով աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2015թ. հուլիսի 10-12-ը ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է ք. Ծաղկաձորում կայացած Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով խորհրդին կից աշխատանքային խմբի արտագնա նիստին,
- ✓ 2015թ. հուլիսի 14-ին ՀՀ ԱՎԾ տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ. Մարտիրոսովան մասնակցել է ք. Երևանում կայացած «Բազմաչափ աղքատությունը Հայաստանում» խորագրով կլոր-սեղան քննարկմանը,
- ✓ 2015թ. հուլիսի 15-ին ՀՀ ԱՎԾ տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ. Մարտիրոսովան մասնակցել է ք. Երևանում կայացած «Տաջիկստանի, Ղազախստանի և Հայաստանի եռակողմ փորձի փոխանակում սոցիալական պաշտպանության ոլորտում» խորագրով սեմինարին,
- ✓ 2015թ. հուլիսի 16-ին ՀՀ ԱՎԾ վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի պետ Ք. Պողոսյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «ԵԱՏՄ անդամակցության շրջանակներում ՀՀ-ը տեխնիկական և ֆինանսական աջակցություն ցուցաբերելու մասին» համաձայնագրի նպատակների իրագործման նկատմամբ հսկողության և ՀՀ շահագրգիռ մարմինների փոխգործակցությունը համակարգելու նպատակով ստեղծված աշխատանքային խմբի անդրանիկ հանդիպմանը,
- ✓ 2015թ. հուլիսի 30-ին ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Հղիություն՝ պտղի սեռով պայմանավորված արհեստական ընդհատումների կանխարգելման և օրենսդրական կարգավորման խնդիրները Հայաստանում» խորագրով կլոր սեղան քննարկմանը,

- ✓ 2015թ. հուլիսի 16-ին ՀՀ ՎՊԽ անդամ Յու. Պողոսյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Մաքուր էներգիա և ջուր» ծրագրի կողմից՝ գետավազանային կառավարման պլանավորման նպատակով ստեղծված, Որոշումների կայացմանն աջակցող համակարգի խորհրդատվական խմբի վեցերորդ հանդիպմանը,
- ✓ 2015թ. օգոստոսի 2-3-ը ՀՀ ՎՊԽ անդամ Յու. Պողոսյանը մասնակցել է ք. Աղվերանում կայացած ԱՌՆ առաջարկվող չափորոշիչների և ԿԶՆ թիրախների կենսունակության և կիրառելիության հնարավորության արդյունքների ներկայացման և վերջնական ամփոփման նպատակով հանդիպում քննարկմանը,
- ✓ 2015թ. օգոստոսի 26-ին ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը, առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Ի. Բարոյանը և վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժնի գլխավոր մասնագետ Ն. Մարգարյանը մասնակցել են ք. Երևանում կայացած Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված Վիճակագրական խորհրդատվական կոմիտեի վիճակագրության ճյուղային և սոցիալ-ժողովրդագրության վիճակագրության գծով ենթակոմիտեի նիստին՝ տեսակոնֆերանսի միջոցով,
- ✓ 2015թ. օգոստոսի 27-ին ՀՀ ԱՎԾ վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Ն. Մուշեղյանը, միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Հ. Եղիազարյանը և բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի պետ Վ. Արևշատյանը մասնակցել են ք. Երևանում կայացած Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված Վիճակագրական խորհրդատվական կոմիտեի տնտեսական վիճակագրության գծով ենթակոմիտեի նիստին՝ տեսակոնֆերանսի միջոցով,
- ✓ 2015թ. օգոստոսի 27-ին ՀՀ ԱՎԾ տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բաժնի առաջին կարգի մասնագետ Ս. Շահգելոյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «NVivo ծրագրային փաթեթի կիրառմամբ որակական տվյալների վերլուծության ակնարկ» թեմայով դասընթացին:

## ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

---

- ✓ 2015թ. հուլիսի 6-15-ը ՀՀ ԱՎԾ-ում էին Համաշխարհային բանկի փորձագետներ Մորից Մեյերը և Գրեգորի Կիսունկոն՝ Ազգային ռազմավարության ծրագրի համար ՀԲ-ի ECASTAT բազմադոնոր Տրաստ հիմնադրամի միջոցով ՀՀ ԱՎԾ-ին հնարավոր աջակցություն ցուցաբերելու հետ կապված հարցերի քննարկման նպատակով,
- ✓ 2015թ. հուլիսի 7-11-ը ՀՀ ԱՎԾ-ում էր Եվրասիական տնտեսական հանձնաժողովի վիճակագրության վարչության արտաքին և փոխադարձ առևտրի վիճակագրության բաժնի խորհրդատու Իվան Սուխարևը «Ապրանքների արտաքին և փոխադարձ առևտրի տվյալների բազաների ձևավորման փորձի փոխանակման» շրջանակներում ապրանքների արտաքին և փոխադարձ առևտրի տվյալների բազաների կատարելագործման հարցերի քննարկման նպատակով,
- ✓ 2015թ. հուլիսի 20-31-ը ՀՀ ԱՎԾ-ում էր ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության տեղեկատվական տեխնոլոգիաների և վիճակագրության գծով միջազգային փորձագետ Վասիլ Պետրեն GCP/ARM/006/EC «ENPARD տեխնիկական աջակցություն Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը» ծրագրի շրջանակում գյուղատնտեսական համատարած հաշվառման գծով աջակցություն ցուցաբերելու նպատակով,
- ✓ 2015թ. օգոստոսի 10-14-ը ՀՀ ԱՎԾ-ում էին Եվրասիական տնտեսական հանձնաժողովի փորձագետներ Լարիսա Պանովան և Մարինա Բեդինան ՀՀ ԱՎԾ-ի և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի համագործակցության մի շարք հարցերի քննարկման նպատակով,
- ✓ 2015թ. օգոստոսի 10-ից ՀՀ ԱՎԾ-ում է «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը» երկրորդ ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի մշտական խորհրդատու, Դանիայի վիճակագրական ծառայության ներկայացուցիչ Պիտեր Բոնստեդ Անան Հանսենը Երկրորդ ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրին առնչվող հարցերի քննարկման նպատակով (ծրագրի տևողությունը 2015-2017թթ.),

- ✓ 2015թ. օգոստոսի 19-21-ը ՀՀ ԱՎԾ-ում էին Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիայի (EFTA) խորհրդատու Հենրիխ Բրյունգերը, ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի (UNECE) խորհրդատու Յան Բիֆուգլիենը, ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի (UNECE) խորհրդատու Վադիմ Պիսչեյկոն, Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիայի (EFTA) Վիճակագրական գրասենյակի ներկայացուցիչ Անդրեա Շելլերը, Եվրամիության վիճակագրական ծառայության (Eurostat) ներկայացուցիչ Կլաուդիա Յունկերը, ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի (UNECE) վիճակագրական բաժնի ներկայացուցիչ Անու Պելտոլան, ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի (UNECE) վիճակագրական բաժնի ներկայացուցիչ Ալիս Կովարիկովան, ՄԱԿ-ի վիճակագրական բաժնի (UNSD) ներկայացուցիչ Գաբրիել Գամեսը Ընդհանուր վիճակագրական օրենքի (GSL) խմբագրական խորհուրդի երկրորդ հանդիպման նպատակով: